

վրա, ապա հարյուր արևմուտքից, ընդհակառակը, այն տեղանքի նկատմամբ ցածր է և խոցելի այդ կողմից: Եկեղեցուն կից երկհարկանի շինություններն օդատղործվել են նաև ռադմական նյութատակներով: Վերին հարկի հարթակներից վտանդի դեպքում հնարավոր էր կրակի տակ վերցնել պարիսպների մատուցները, կրկնապատկելով ըստ բարձրության, պաշտպանական համակարգը:

Նման բաղմաստիճան համակարգը և անառիկ դիրքը հնարավորություն էրնձեռել բերդի փոքրաթիվ պաշտպաններին հաջողությամբ դիմադրելու թըշնամու տասնապատիկ մեծ ուժերին: Հալիձորի բերդը, ինչպես և շատ ուրիշ բերդեր Հայաստանում, ստորդետնյա գաղտնի անցք է ունեցել դեպի դուրս՝ պաշարման ընթացքում ջուր հայթայթելու կամ թշնամու վրա անսպասելի հարձակվելու համար: Հալիձորի գաղտնի անցքը օգտադործվել է երկրորդ նյութատակով և անակնկալը այնքան մեծ է եղել, որ մի քանի հարյուր դինվորների կարողացել են խուճապի մատնել թշնամու զորքը:

XV—XVIII դարերում Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը բարենպաստ չեղավ ճարտարապետական-շինարարական կյանքի համար, այն ընթացավ պատերազմների, ասպատակությունների ու ավերածությունների պայմաններում: Սակայն, շնայած դժվարին այս պայմանների, ճարտարապետական արվեստը շարունակեց իր հաջորդական զարգացումը, պահպանելով և զարիթին հանձնելով դարերից եկող իր ավանդներն ու նվաճումները:

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

XIV—XVIII դարերի հայ մշակութային կյանքի մեջ շատ նշանակալից եղավ հայկական տպագրության սկզբնավորումն ու զարգացումը: Մագնիզի XV դարի սկզբներին՝ այն մեծ դեր կատարեց մեսրոպյան դպրոցյան պահպանման ու հետագա զարգացման գործում: Եվրոպայում XV դարի վերջերից շատ արագ զարգացող տպագրական գործը իր ակնհայտ արժանիքներով չէր կարող չգրավել հայ մտավորականության, այդ թվում հոգևորականության առաջավոր մասի ուշադրությունը: Բավական է ասել, որ այն ժամանակ արդեն դրշագիր ընդօրինակությամբ մի ձեռագիր մատյան ստեղծելու վրա ծախսվող ժամանակամիջոցը բավական էր այդ մատյանի 300—500 (և ավելի) տուրքեր օրինակներ լույս ընծայելու համար:

Հայաստանը մշտական շփման մեջ էր եվրոպայի հետ. այդ շփումը կատարվում էր ոչ միայն հայ առևտրականների, բանազնացների ու նվիրակների միջոցով, այլև շնորհիվ եվրոպայի տարբեր երկրներում հաստատված հայկական համայնքների, որոնք անընդհատ համալրվում էին Հայաստանից փախըստական գաղթականներով:

Մյուս կողմից, Հայաստանում որքան էլ ճիշտ հասկացվեր գոտեներգյան գյուտի նշանակությունը, որքան էլ գրավիչ թվար տպագրական արվեստը հայ գրքի բազմացման համար օգտագործելու հեռանկարը, ակներև էր նաև, որ այն ժամանակ մայր հայրենիքում տպարան հիմնելն անհնար էր: Քաղաքական անկայուն վիճակը, հայկական հողում մեկը մյուսին հաջորդող պատերազմները բացառում էին Հայաստանում տպագրական գործի հիմնադրումը:

Մենում էր մի հիշք՝ հայերեն գրքեր տպագրելու Եվրոպայում, այնտեղ ստեղծել հայկական տպարաններ:

Հայաց եկեղեցին, որ պատմական հանդիմանքների բերումով դարձել էր հայ հասարակական ու մշակութային կյանքի ղեկավարը, XVI դարում արդեն լուրջ հետաքրքրություն ցուցաբերեց տպագրական գործի նկատմամբ: Եկեղեցու մի շարք ներկայացուցիչների համար ավելի ու ավելի հասկանալի էր դառնում հայերեն գրքերի շատ զգալի պակասը տպագրության միջոցով լրացնելու հնարավորությունը: Դրա վկայությունն է, օրինակ, Կիրիկիայի Աղարիա կաթողիկոսի 1585 թ. դրած նամակի այն հատվածը, որտեղ գանդասու կա հայերեն Աստվածաշնչի խիստ սակավության վերաբերյալ և խնդրանք Գրիգոր XIII պապին՝ հրատարակելու այդ գիրքը¹:

Առաջին մարդը, որին հաջողվեց Եվրոպայում հիմնել տպարան և հրատարակել հայերեն գրքեր, Հակոբ Մեղապարտն էր՝ հայ տպագրության ռահվիրան:

Հակոբ Մեղապարտը տպագրական գործով զբաղվել է Վենետիկում, 1510-ական թվականներին: Պատահական չէ, որ հայ առաջին տպագրիչը գործունեության վայր ընտրեց Վենետիկը: Գոտենբերգյան տպագրությունը 1440-ական թվականներին ծագելով Գերմանիայում՝ 1465-ին արդեն անցել էր Իտալիա: Իսկ XV դարի վերջում Վենետիկը դարձել էր եվրոպական տպագրության ամենախոշոր կենտրոնը (ըստ մոտավոր հաշվումների XVI դարի սկզբներին այս քաղաքում գործել է շուրջ 250 տպարան), Հայկական տպագրություն ստեղծելու համար Վենետիկն ուներ նաև այլ նպաստավոր պայմաններ: Այստեղ, համեմատած Իտալիայի այլ վայրերի հետ, ավելի թույլ էր կաթոլիկական գրաքննությունն ու հավատաքննությունը, և անծանոթ լեզվով գրքեր հրատարակելու հաջողության առավել լավ մեծ էր: Բացի այդ, Վենետիկում վաղուց ի վեր (հավանաբար XII դարից) կար հայկական համայնք: Եվրոպական տարբեր քաղաքների հետ առևտուր անող հայ վաճառականները մեծ մասամբ Վենետիկով էին անցնում, Հայաստանից իբրև ուխտավոր կամ որևէ առաքելությամբ Եվրոպա եկողները սովորաբար նախ Վենետիկ էին այցելում: Կիրիկյան հայկական պետության և Վենետիկյան հանրապետության միջև հաստատված վաղեմի բարեկամությունն էլ ավանդաբար պահպանվում էր: Դրա արտահայտություններից էր Վենետիկի «Հայոց տունը», որ ստեղծվել էր Մարկոս Միանիի կտակով և ուր օթևանում, նյութական օժանդակություն էին ստանում հայ պանդուխտները: Ավելորդ չէ հիշել նաև, որ հայերը նկատելի ծառայություններ են մատուցել Վենետիկին՝ ժամանակին ծաղկուն հանրապետությանը, ուր եղել են անվանի հայ գործիչներ:

XVI դարում Վենետիկը եղավ ոչ միայն հայ տպագրության ծննդավայրը, այլև՝ իսկական օրրանը. այստեղ գործեցին նաև երկրորդ ու երրորդ հայ տպագրիչները: Ավելին, մինչև XVII դարի սկզբները Վենետիկն էր հայ տպագիր գրքի գլխավոր մատակարարը. այդ ժամանակամիջոցում ամենից ավելի հայերեն գրքեր տպագրվել են այս քաղաքում:

Մեղ են հասել Հակոբ Մեղապարտի տպագրած 5 անուն գրքերը, դրանք են (ըստ տպագրման հաջորդականության)՝ «Ուրբաթագիրք», «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատոմար», «Տաղարան»: Կա վկայություն նույն

¹ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1914, էջ 10:

տպարունից լույս տեսած մի «Սաղմոսարանի» մասին, որը, սակայն, չի պահպանվել մինչև մեր օրերը:



Առաջին հայերեն տպագիր գրքերից՝ «Տաղարանը» (Վենետիկ, 1513 թ.)

Հիշյալ գրքերից միայն «Պատարագատետրը» ունի հրատարակչական հիշատակարան. «Գրեցաւ սուրբ տառս ի ԶԿԹ (1513), ի աստուածապահ քաղաքս Վէնէժ, որ է Վենետիկ Ֆռանկոստան, ձեռամբ մէղապարտ Յակոբին. ով որ կարդայք, մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ»: Այս հակիրճ տեղեկությունից է, որ իմանում ենք առաջին հայ տպագրիչ Հակոբի անունը, նրա հրատարակած գրքերի տպագրավայրը, ինչպես և այդ գրքերից մեկի՝ «Պատարագատետրի» հրատարակման ճիշտ տարեթիվը՝ 1513 թ.:

Քանի որ «Ուրբաթագիրքը» տպագրվել է «Պատարագատետրից» սուաջ, ենթադրել են, որ այն պետք է լույս տեսած լինի մի տարի վաղ՝ 1512-ին: Ուստի և հայ տպագրության սկիզբը համարվում է 1512 թվականը:

Այդպիսով, Հակոբ Մեղապարտի շնորհիվ հայերենը իր հարևան լեզուներից առաջինը դարձավ տպագրության լեզու, իսկ մերձարեւելյան բոլոր լեզուներից առաջնությունը զիջեց միայն եբրայերենին: Արդի Սովետական Միության ժողովուրդների լեզուներով երբևէ կատարված հնագույն տպագրությունների առաջնեկները Հակոբ տպագրիչի հրատարակած գրքերն են:

Հակոբի գրքերի տպատառերը երկու տեսակ են՝ գլխագիր և բոլորագիր, ձևով ու չափով նման ձեռագրական տառերի: Հայ տպագրության սկզբնավորողը ձգտել է իր հրատարակություններին գրչագիր մատյանների տեսք տալ, քանի որ վերջիններս հին սովորությամբ ավելի հարգված էին, իսկ տպագիր

գրքերի նկատմամբ այն ժամանակ շատերի մեջ նախապաշարում կար։ Հակոս Մնղապարտը իր գրքերում օգտագործել է նաև հասուկ ոճի բազմաթիվ դարձվածքներ։ Վերնախորագրերի համար գործածել է Լրեք խումբ զարդ-շրջանակներ (24 հատ), որոնք փոխելիով գրված են բոլոր էջերի վերևի մասում։ Բացի դրանցից, կան շորս գեղեցիկ զարդարանքներ «արաբեսկ» ոճի, որոնք օգտագործված են բոլոր հինգ գրքերի մեջ, բայց ամենից շատ «Տաղարանում»։

Հակոբի տպագրությունը երկգույն է՝ սև և կարմիր։

Գրքերի վերջում գրոշմված է խաչաձև տպարանանիշ, լատինական շորս տառերով՝ D. I. Z. A.: Եղել են այս տառերի մի շարք վերծանումներ, ամենից հավանականը՝ Կ. Բասմաջյանինն է՝ D.—Del servus (Աստծո ծառա), I.—Iacobus (Հակոբ), Z.—Zannix (Ծաննիլյան կամ Հովհաննիսյան), A.—Armentus (Հայ)²։

Հակոբ Մեղապարտի տպագրած գրքերի բովանդակությունը բազմազան է։ Միջնագարում թե պատարագատետրերն ու սաղմոսարանները, թե ուրբաթագրքերն ու աղթարքները և թե պարզատումարներն ու տաղարանները ձևագիր ընդօրինակություններով շատ տարածված են եղել հայոց մեջ։ Ընդ որում, բացի «Պատարագատետրից», որ եկեղեցու ծիսական գլխավոր գրքերից էր, մյուսներն ընթերցվել են եկեղեցականների և աշխարհականների կողմից։ Այդպիսով Հակոբը հաշվի է առել ժամանակի պահանջը և հրատարակության համար ընտրել է Հայաստանում և հայ գաղթավայրերում շատ գործածվող ու ընթերցվող գրքեր։ Ըստ բովանդակության այդ գրքերը կարելի է երեք տեսակի բաժանել. եկեղեցական («Պատարագատետր», «Սաղմոսարան»), առօրյա գործածության կիսաաշխարհիկ այնպիսի գրքեր, ինչպես բժշկարաններ, օրացույց և այլն («Ուրբաթագիրք», «Աղթարք», «Պարզատումար») և զեղարվեստական («Տաղարան»)։ Հատկապես վերջին դեպքում կատարած ընտրությունը և նրա ամենից ավելի խնամքով, շքեղ հրատարակությունը խոսում է տպագրիչի հակումների ու ճաշակի մասին։ Հակոբի հրատարակած «Տաղարանը», որ պարունակում է Շնորհալու, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու, Մկրտիչ Նաղաշի և այլոց գործերը, միջնագարյան բանաստեղծության մի ուշագրավ և հետաքրքիրական ժողովածու է։

Հակոբի տպարանը աշխատել է առավելագույնը 2—3 տարի։ Դրանից հետո հայկական տպագրության կեսդարյա գագար է տեղի ունեցել։ Չնայած դրան, հակոբյան հրատարակությունները հիմք ու ելակետ են եղել հայկական տպագրության շարունակման համար։ Հայ երկրորդ տպագրիչը՝ Աբգար Թոխաթցին, իր տպագրական աշխատանքն սկսելուց առաջ ձեռքի տակ է ունեցել Հակոբի հրատարակությունները։ Դա երևում է նախ Աբգարի գրքերի տպագրական արվեստից. օգտագործված են այնպիսի ոճի զարդագրեր, որպիսիք տեղ են գտել առաջին տպագրիչի հրատարակություններում, ապա իր նախորդի օրինակով Աբգարը նույնպես ձեռագրանման տառեր է պատրաստել տվել։ Ուշագրություն է գրավում նաև այն, որ երկրորդ տպագրիչը մասամբ կրկնել է առաջինի հրատարակությունները («Պատարագատետր», «Պարզատումար», «Տաղարան», «Սաղմոսարան»)։

Աբգար Դպիր Թոխաթցին հայտնի անձնավորություն է՝ XVI դարի ազատագրական շարժումների մասնակից։ Նա ժամանակի զարգացած մարդկանի-

² Տե՛ս «Արմենիա», 1912, № 39։

ցից էր: Միևնույն ժամանակ Սևրաստացի կաթողիկոսի հանձնարարականով 1562 թ. նա մեկնում է Իտալիա, իր որդի Սուլթանշահի և մի քահանայի ուղեկցությամբ: Հոռոմ է հասնում 1564-ին:

Պատգամավորության նպատակն էր Հոռոմի ուշադրությունը դրավել Հայաստանի պաշտպանության հարցի վրա: Սակայն այդ ուղեւորության միակ շոշափելի արդյունքը լինում է հայկական նոր տպագրության կազմակերպումը:

XVI դարի 60-ական թվականներին Իտալիայում ուժեղացել էին կաթոլիկական համառաքնությունն ու գրաքննությունը: Այս երկրում հայերեն գրքեր տպագրելը շատ ավելի դժվար էր, քան Հակոբ Մեղապարտի օրերին: Սակայն կարողանում է Հոռոմի պապից հայերեն տպատառեր պատրաստելու թույլտվություն ստանալ, որ ինքնըստինքյան մեծ հաջողություն էր այն օրերին: Տպատառերը պատրաստել է տալիս Հոռոմում և Կ. Պոլիս վերադառնալիս բավական ժամանակ կանգ է առնում Վենետիկում: Այստեղ 1565 թ. նրա ջանքերով լույս է տեսնում մի մեծագիր թերթի վրա տպագրված տոմարացույց՝ «նաունայինթուր տումարի» վերնագրով, որի ճակատին կա երկու հետաքրքրական նկար: Առաջինում պատկերված է ինքը՝ Աբգարը իր որդու հետ Հոռոմի պապի և մի կարգինալի առջև: Հայերեն տպատառերը ձեռքին, իսկ մյուս նկարում Աբգարը Վենետիկի գոթի և մեծամեծների առջև է կանգնած: 1565—1566 թթ. Աբգար Թոխաթցին տպագրում է մի Սաղմոսարան (որի մեջ նույնպես տպված են վերոհիշյալ նկարները), այնուհետև, տպագրական պարականոնությամբ, մեկնում է Կ. Պոլիս:

Այստեղ Աբգարի տպարանը գործում է Քեֆալի թաղի ու Նիկողայոս եկեղեցում և լույս է ընծայում «Տօնացոյց», «Ժամագիրք» և «Պատարապամատոյց» (այս երկուսը մի գրքով), «Պարզատումար», «Տաղարան» (1568) և «Մաշտոց» (1569): Նախքան այդ՝ 1567-ին Կ. Պոլսում տպագրվել էր «Փոքր բերականութիւն», որ նույնպես Աբգարի հրատարակությունն է համարվում, թեև հիմք կա մտածելու, որ դա Աբգարի տպագրությունը չէ, այլ Հոթար անունով անձանոթ մի տպագրիչի:

Աբգարի ծառայությունը եղավ ոչ միայն այն, որ նա նոր կյանք հաղորդեց հայ տպագրության ընդհատված գործին, այլև այն, որ տպագրությունը հաստատեց հայաշատ մի քաղաքում, որն ավելի ուշ պետք է դառնար հայկական գրահրատարակչության գլխավոր կենտրոնը:

Աբգար Թոխաթցու որդի Սուլթանշահը (Մարկ-Անտոնիո) ընկալություն է հաստատում Հոռոմում և այդտեղ ուսումնասիրում լատինական դպրությունը, նկատելի դիրք ձեռք բերում Վատիկանում: Շուտով նրան է միանում քահանա Հովհաննես Տերզանցին, որն իր որդի Խաչատուրի հետ Հոռոմ էր եկել Հայաստանից (Տերզանցին Բաղեշի շրջանից էր. ապրել էր նաև Տիգրանակերտում):

Այս երկուսի ջանքերով 1584 թ. Վատիկանի նախաձեռնությամբ Հոռոմի Dominici Basea տպարանում լույս է տեսնում այդ ժամանակ գահակալող Գրիգոր XIII պապի կազմած նոր տոմարի հայերեն թարգմանությունը՝ «Տօմար Գրիգորեանն յաւիտենական»: Տպագրությունը կատարվում է հայերեն այն տառերով, որոնք 1579 թ. պատրաստել էր Ֆրանսիացի դրածույ Ռոբերտ Գրանթոնը՝ Սուլթանշահի օգնությամբ: Այս տառերի առանձնահատկությունն այն էր, որ սրանք իրենց գծագրությամբ և չափով այլևս ձեռագրակերպ չէին, այլ՝ տպագրական, նման ժամանակակից հայերեն տպագիր տառերին: Այս

տառերը XVII դարի սկզբներից օգտագործվեցին վատիկանի Հալիստի տա-
րածման ժողովի նշանավոր տպարանում:

Սուլթանշահը 1586-ին Հռոմում տպագրում է հայկական «Մաշտոցից» մի
հատված, իսկ Տերզնցին նույն թվականին անցնելով Վենետիկ, այնտեղ նոր
տառեր է պատրաստել տալիս և մի տարի անց լույս ընծայում «Սաղմոսարան»:
Երկգույն, մանր տառերով տպագրված այս գիրքը պարունակում է Տերզնցուն
և նրա որդուն ներկայացնող դիմանկար, իսկ հիշատակարանը պատմում է
իտալիայում տպագրիչի անցկացրած արկածալից կյանքի մասին:

Ակնհայտ է հայ հին տպագրիչների հակումը Սաղմոսարան հրատարակե-
լու նկատմամբ: Ինչպես XVI դարում, այնպես էլ հետագայում, հայ տպագրիչ-
ներն իրենց գործը կամ սկսում էին Հին Կտակարանի այս գրքի տպա-
գրությամբ, կամ այլ առիթով էին այն լույս ընծայում, հաճախ մի քանի
անգամ: Դրա պատճառն այն էր, որ Սաղմոսարանը ոչ միայն եկեղեցական,
այլ նաև աշխարհիկ ընթերցանության գիրք էր: Փոքր չափսով հրատարակած
Սաղմոսարաններ երկրից-երկիր իրենց հետ ման էին ածում ու կարդում նաև
կիսագրագետ հայ վաճառականները, այդ գրքերով մայրենի լեզու էին սովոր-
ում գեռահասները:

Հովհաննես Տերզնցու գործունեությամբ ավարտվում է հայ տպագիր գրքի
պատմության առաջին՝ վաղ շրջանը և սկսվում հաջորդը:

Հակոբ Մեղապարտից մինչև Տերզնցի մեսրոպատառ շատ գրքեր չտպա-
գրվեցին, բայց ստեղծվեցին ավանդներ, մանավանդ վստահություն հայկա-
կան ինքնուրույն տպագրություն ունենալու հնարավորության նկատմամբ:³
Միջնադարյան հայ գրչի աշխատանքին զուգահեռ մշակութային ասպարեղ էր
մտնում հայ տպագրիչը, որի աշխատանքը պատմական զարգացման ընթաց-
քով աստիճանաբար պետք է գերակշիռ դառնար և ի վերջո ասպարեղից հաներ
գրչության արվեստը: Հայ հին տպագրիչները ժամանակի մշակութային-լու-
սավորական առաջապահիկ գործիչներ էին: Նրանք միայն տպագրիչ չէին
սովորական իմաստով, այլ նաև հրատարակիչ, խմբագիր, սրբագրիչ և ամենից
ավելի իրենց գործով խանդավառված, հայ գրքին նվիրված անձինք: Նրանք
սովորաբար ժամանակի բարձր կրթություն ստացած, լեզվական ու բնագրա-
գիտական հմտություն ու գիտելիքներ ունեցող մարդիկ էին:

XVII դարում հայ տպագրության զարգացումը երկու կարևոր շրջան
ունեցավ. ա) մինչև 1660-ական թվականներ (մինչև ամստերդամյան տպա-
գրության սկիզբը) և բ) 1660-ական թվականներից սկսած:

1616 թ. լվովում տպարան է սարքավորում և հայերեն գրքեր տպագրում
տեղի հայկական եկեղեցու քահանա, բաղիշեցի Հովհաննես Քարմատանեցու:
Նրա հրատարակած գրքերից պահպանվել են Սաղմոսարանը (1616) և մի
հայատառ ղվաղերեն աղոթագիրք (1618): Կա հիշատակություն Քարմատա-

³ Հայկական տպագրության այս վաղ շրջանում, րացի հայերից, մեսրոպատառ տպագրու-
թյուն կատարեցին նաև մի քանի եվրոպացիներ: Այսպես, հայատառ փայտափորագիր տպագրու-
թյունը տեղ գտավ Փարիզում լույս տեսած հետևյալ երեք գրքերի մեջ. արևելագետ Գուլիելմ Պոս-
տելի «Linguarum»-ում (1538), Բլեզ դը Վիժների «Ձեռնարկ ծածկագրերի մասին» աշխատու-
թյան մեջ (1586) և Պետրոս Գետանոս Պալմայի «Վեմուլներ»-ում (1596): Հայկական տպագիր
հատվածներ (շարժական տառերով) կան իտալացի արևելագետ Թեսեսո Ամբրոսիոսի «Intro-
ductio» (Ներածություն) գրքում (Պալիա, 1539), գերմանացի հեղինակ Լեոնարդ Բուլցայգերի
երկու աշխատություններում (Բեռլին, 1583):

նենցի լույս ընծայած մի բժշկարանի մասին, որը, սակայն, չի պահպանվել։ Ուշադրություն է գրավում հայատառ ղփչաղերեն գրքի տպագրությունը։ Այն ժամանակ կոմի շրջակայքի հայության մի զգալի մասի խոսակցական լեզուն ղփչաղերենն էր, ուստի և այդ լեզվով հրատարակված գիրքը ժողովրդի ընթերցանության համար էր նախատեսված։

XVII դարում հայ եկեղեցին ավելի գործուն քայլեր է անում եվրոպական երկրներում, առաջին հերթին Իտալիայում հայերեն գրքերի առավել զանգվածային տպագրություն կազմակերպելու ուղղությամբ։ 1630 թ. Մովսես Կյաթողիկոսն է դիմում Հռոմի պապին հայերեն գրքեր հրատարակելու խնդրով⁴, նույն ժամանակ նման խնդրանքով Վատիկանին դիմում են Նոր Զուղայի հայ հոգևորականները⁵։ Նրանք առաջարկում են ջուղայեցի վաճառականների ծախսերով Հռոմում հիմնել տպարան և ձեռնարկել հայերեն գրքերի տպագրությանը։ Այս կարգի դիմումներում ամենից հաճախ խոսքը վերաբերում էր հայերեն Աստվածաշունչ հրատարակելուն։ Պատճառն այն էր, որ Աստվածաշնչի գրչադիր օրինակներ շատ քիչ կային և այդ մեծածավալ գրքի ձեռագիրը բնօրինակումը դժվարին գործ էր։

Հայերի անունից Աստվածաշունչ տպագրելու խնդրանքով Վատիկանին է դիմում նաև Զմյուռնիայում Վենետիկի հանրապետության դեսպանի թարգման Հովհաննես Անկյուրացին (Մուխոն)։ Վերջինս նաև Հռոմին ակնարկում է այն մասին, որ բացառված չէ հայերեն Աստվածաշունչը բողոքական (հերետիկոսական)՝ Հուլանդիայում տպագրելու հնարավորությունը։ Ինքը՝ Անկյուրացին, որ հայ գրքի խանդավառ երկրպագուներից էր, 1642 թ. սեփական միջոցներով Վենետիկում տպագրում է մի Սաղմոսարան, իսկ հաջորդ տարին՝ Ներսես Շնորհալու «Յիսուս որդին»։ «Նդի ի մտի զտպագրութեան արհեստն առ ի պայծառութիւն ազգիս հայոց»,— գրում է Անկյուրացին իր հիշատակարանում։

Նորջուղայեցիները տեսնելով, որ Հռոմը իրենց խնդրանքը չի կատարում, Իտալիա են ուղարկում Ամենափրկիչ վանքի միաբան Հովհաննես Զուղայեցուն, որպեսզի նա սովորի տպագրական արվեստը և, վերադառնալով Նոր Զուղա, տպագրի Աստվածաշունչը ու այլ գրքեր։ Հովհաննեսը, իրոք, սովորում է տպագրական գործը և կիվոնոյում 1644 թ. իր նորաձույլ տառերով տպագրում վարձյալ Սաղմոսարան։

Սակայն, նախքան այդ, Նոր Զուղայում արդեն սկսել էր գործել տպագրական հաստոցը։ Ամենափրկիչ վանքի միաբանները խաչատուր Կեսարացու նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ կարողանում են ստեղծել հայերեն տպագրական մամուլ և այդ ինքնաշեն տպարանում, 1638 թ. լույս են ընծայում մի Սաղմոսարան։

Այն ժամանակներում ավատական Պարսկաստանի խորքում, եվրոպական մշակութային կենտրոններից հեռու ընկած այդ վայրերում, տպագրական գործին ձեռնարկելը մեծ հանդգնություն էր։ Տպարանը սարքավորողներից ու այնտեղ աշխատողներից ոչ մեկը չէր տեսել տպագրական որևէ պարագա, ծանոթ չէր տպագրական գործին։ Նրանք առանց դրսից եկած որևէ վարպետի օգնության, ինքնուրույն պատրաստում են ապարանը, հաստոց և այլ պիտույք-

⁴ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1934, էջ 524։

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 524—525։

ներ ու սկսում Սաղմոսարանի հրատարակությունը: Դա, ըստ էության, տպագրության գյուտի հայկական կրկնությունն էր, կատարված մի քանի համարձակ ու հնարամիտ մարդկանց կողմից և ամենից ավելի հաշատուր Կեսարացու ջանքերով:

Ահա Պարսկաստանում հիմնված առաջին տպարանի անդրանիկ հրատարակության հիշատակարանից մի հատված. «...նղև տպագրությունս ի քաղաքն Շօշ, յանապատն Ջուղայոյ, թուին ՈԶ և է (1638), ձեռամբ նուաստ հաշատուր վարդապետի Կեսարացույ, Տարի մի է և հինգ ամիս, որ զցայգ և զցերեկ անդադար աշխատիմք հանդերձ միաբան ուխտիս, զի ոչ եմք տեսնալ ի վարպետէ և ոչ ունիմք ուսուցիշ»:

Տպարանը 1641 թ. լույս ընծայեց ևս երկու գիրք՝ «Հարանց վարք» ու «Խորհրդատետր», հաջորդ տարին՝ «Ժամագիրք ատենի»: Նոր Ջուղայի այդ հրատարակությունները տպագրական արվեստի տեսակետից շատ պարզունակ են՝ տառերը անհստակ, դարդերը՝ շատ քիչ ու հասարակ, սակայն այսօր այդ զրբերը պատկառանքի մեծ զգացում են առաջացնում՝ իրենց ստեղծողների դժվարին ու անձնվեր աշխատանքի նկատմամբ:

Շուտով Եվրոպայից Նոր Ջուղա է վերադառնում տպագրական գործին վարժված Հովհաննես Ջուղայեցին: Նա այստեղ 1647-ին տպագրում է Աղաբիայի «Պարզատումարը», իսկ 1650 թ. սկսում Աստվածաշնչի տպագրությունը, որը սակայն ընդհատվում է առաջին մամուլների տպագրությունից հետո. պարզունակ տպարանում հնարավոր չի լինում հրատարակել այդպիսի մի ծավալուն և բարդ բնագիր:

Նոր Ջուղայի տպարանը ի վիճակի չեղավ նկատելիորեն լրացնելու հայ գրքի պակասը կամ բավարարելու դեթ եկեղեցու պահանջների մի մասը: Պարզ էր դառնում, որ հայերեն գրահրատարակության հալյը ավելի հեշտ կարող էր լուծվել Եվրոպայում:

1656 թ. Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը էջմիածնի ղպիր Մատթեոս Ծարեցուն ուղարկում է Եվրոպա՝ տպագրական գործերով: Ծարեցին նախ գիմում է Հռոմ: Հաջողության չհասնելով մեկնում է բողոքական Հոլանդիա և իր գործունեության վայր ընտրում առևտրաշատ Ամստերդամը: Այստեղ էջմիածնի պատվիրակը մեծ կամք ու տոկունություն է ցուցաբերում, հաղթահարում բազմապիսի դժվարություններ: Նա, իր խոսքով ասած. «Ի ցայգ և ցերեկ մահու չափ աշխատելով միայն և առանց ուրեք օգնականի, յերկարելով յաշխատութիւնս Դ ամ և Ը ամիս, զանձն առնելով զվիշտս և զտառապանս...» ի վերջո կարողանում է ստեղծել բաղձալի տպարանը և իբրև փորձ սկսում տպագրել Շնորհալու «Յիսուս որդին»: Տպարանի խոշոր բոլորագիր և զխագիր տպատառերը Ծարեցու տված գծագրերով պատրաստում է նշանավոր էլզեվիրների տպարանատան փորագրիչ-գրաձույլ Վան Դիկը: Ծարեցին հոլանդական մի տպարանից դնում է նաև այն ժամանակ հայտնի նկարիչ-փորագրիչ Քրիստոֆել վան Զիխսեմ Կրտսերի տպատախտակները, որոնք Աստվածաշնչի թեմաներով պատկերներն էին պարունակում՝ մեծ մասամբ ընդօրինակված եվրոպացի նշանավոր վարպետների հայտնի գործերից:

Ծարեցուն վիճակված չէր տեսնելու իր հիմնադրած տպարանի կրախայրիքը: Նա մահանում է 1661 թ. սկզբներին մենակության, օտարության մեջ: Տպարանի տնօրինությունն ստանձնում է այդ ժամանակ առևտրական գործերով Ամստերդամում գտնվող Ջուղայեցի վաճառական Ավետիս Ղլիճենցը, որը

վճարում է Մարեցու պարտքերը, տպարանը փրկում պարտքատերերից և փորձում շարունակել «Յիսուս որդու» ընդհատված տպագրությունը։ Ավետիսը կիսադրադետ մարդ էր, նրա համար շատ դժվար էր տպագրական աշխատանքով զբաղվելը և նա ստիպված նամակով Ամստերդամ է կանչում իր եղբորը՝ Ոսկան Երևանցի վարդապետին, որն այն ժամանակ Ուշի գյուղի ս. Սարգիս վանքի վանահայրն էր, ճանաչված իր գրագիտությամբ ու զարգացմամբ։

Նախքան Ոսկանը կհասնի Ամստերդամ, նրա աշակերտ Կարապետ Անյորիանացին արդեն ստանձնել էր տպարանի ղեկավարությունը, հրատարակել չորս դիրք (երկու ժամագիրք, երկու Սաղմոսարան) և սկսել հինգերորդի՝ մի Շարականոցի տպագրությունը։ 1664-ին Ոսկանը հասնում է Ամստերդամ և Ագրիանացու հետ ավարտում սկսած տպագրությունը։ Դա առաջին տպագիր Շարականոցն էր, հրատարակված մեծ խնամքով, պատկերազարդ։ Այս տպարանը, որ կոչվում էր ս. էջմիածնի և ս. Սարգսի անվամբ, լույս է ընծայում մի Ալբրեխտ Բրաուն և Ոսկանի հեղինակած «Քերականութեան գիրքը», որոնք փորձնական տղադրություններ էին Աստվածաշնչի հրատարակությանը նախապատրաստվելու ճանապարհին։ Այդ առնչությամբ Ոսկան Երևանցին այլ նախապատրաստական աշխատանքներ էլ է անում։ Լրացնում է տառատեսակները, ավարտում է դեռևս Հայաստանում սկսած խմբագրական աշխատանքը Աստվածաշնչի բնագրի վրա, վարժում է իր օգնականներին տպագրական գործում։ 1666 թ. մարտի 11-ին Ոսկանը իր օգնականներ Կարապետ Ագրիանացու և Սահան Երևանցու հետ սկսում է Աստվածաշնչի տպագրությունը, որը տևում է ավելի քան երկուսուկես տարի (լույս է տեսնում 1668 թ. վերջին)։ Այդպիսով, իրականանում է հայերեն Աստվածաշնչի տպագրության դժվարին գործը, որը նախքան այդ, քանիցս ձախողվել էր։

Ոսկանյան Աստվածաշունչը հայ հին տպագրության պսակն է, հայոց հրատարակչական գործի հասունության արտահայտությունը։ Այդ մեծածավալ (1462 էջ կամ 2924 սյունակ, 159 պատկեր) գիրքը հայ տպագրիչ վարպետները՝ հրատարակեցին մեծ խնամքով, բարձր արվեստով։

Ոսկանյան տպարանը Ամստերդամում գործում է մինչև 1669 թ. լույս ընծայելով ևս 11 անուն գիրք, այդ թվում Մաշտոց, Նոր կտակարան, Մովսես Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյցը», «Աղուէսագիրքը» (Վարդան Ագեկցու առակաները), Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանը» և այլն։ Վերջինս առաջին հայերեն տպագիր գիրքն է, որ հրատարակվել է հեղինակի կենդանության օրոք։

Հոլանդիայում հայկական տպագրական գործը ազատ էր կաթոլիկական դրաքննության սահմանափակումներից, սակայն այս երկրում էլ կային ուրիշ դժվարություններ, որոնցից ամենալուրջը տպարանի նյութական նեղվածությունն էր։ Հայ մշակութային կյանքում այնքան մեծ դեր ունեցող տպարանը հոլանդացի պարտքատերերի ճնշման տակ փակվելու վտանգի տակ էր, երբ Ոսկանը 1668 թ. սկսում է տպագրական կյանքը տեղափոխել Լիվոռնո։

Այս քաղաքում տպարանը լույս է ընծայում հրեք անուն գիրք, ապա տեղափոխվում է Մարսել և 1673 թ. վերսկսում աշխատանքը, գործում մինչև 1680-ական թվականների վերջերս՝ լույս ընծայելով ևս 16 անուն գիրք։

Մարսելում 1673 թ. Ոսկան Երևանցին սկսում է Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկի անդրանիկ տպագրությունը, սակայն գրաքննության կասկածների պատճառով այն մնում է անավարտ։ Տպարանի նյու-

Քական ծանր վիճակը և աշխատողներից մեկի իտարգավանքները ընկճում են Ոսկան Երեանցուն, վնասում նրա առողջությանը: Նա ընկնում է անկողին և մահանում 1674 թ. փետրվարի 4-ին:

Տպարանի ղեկավարությունն անցնում է Ոսկանի ազգական Սողոմոն Առնյանին, իսկ իբրև գլխավոր վարպետ շարունակում է աշխատել Ոսկանի աշակերտներից Մատթեոս Վանանդեցի Հովհաննիսյանը, որը հայ հին տպագրության մեծ երախտավորներից է:

Ս. էջմիածնի և ս. Սարգսի տնվաճառարանը գրահրատարակչական շատ կարևոր կենտրոն եղավ հայոց համար, Երեք քաղաքներում գործելով մոտ 30 տարի, այդ տպարան-հրատարակչությունը լույս էին թափել քան չորս տասնյակ անուն հայերեն գրքեր:

Ոսկանի տպարանը կարևոր դեր կատարեց հայերեն գրքերի տպագրական մեծացնելու գործում. նախկինում ընդունված 300—400 օրինակի վախարեն այս տպարանում սովորական էր գիրքը մի քանի հազար օրինակով տպագրելը: Դրա շնորհիվ էր, որ նկատելիորեն սկսեց լրացվել հայ գրքի պակասը. բավարարվում էին ոչ միայն եկեղեցու պահանջները, այլև հայ գիրքը թափանցում էր ժողովրդի մեջ:

Այս տպարանի շնորհիվ ստեղծվեց անընդմեջ գործող հայկական դրահրատարակչությունը. մինչ այդ կարճ ժամանակով հայտնվող ու մարող տպագրական օջախների վախարեն սկիզբ առավ հայկական այն դրատպությունը, որն այլևս չընդհատվեց և հասավ մինչև մեր օրերը: Ոսկանը սպասարարեց առաջնակարգ տպագրիչներ, որոնք տարբեր վայրերում շարունակեցին նրա գործը:

Մշակութային-լուսավորական կարևոր դեր կատարեց նաև վանանդեցիների տպարանը Ամստերդամում, որի հիմնադիրն էր Ոսկան Երեանցու աշակերտ Մատթեոս Վանանդեցին: Սա հայերեն նոր, ավելի կատարելագործված տառաշար է պատվիրում հունգարացի նշանավոր գրածույլ Նիկողայոս Քիշին, սարքավորում տպարան և 1685 թ. տպագրում մի Շարակնոց, Այսպիսով տպարանի գլուխ է անցնում Մատթեոսի ազգական Թովմաս Վանանդեցի Նուրիջանյանը, որին Հայաստանից (Գողթան գավառից) հրավիրել էր Մատթեոսը: Սրանց են միանում նաև Թովմասի եղբորորդիներ, գիտնական եղբայրներ Ղուկաս և Միքայել Նուրիջանյանները, առաջինը վարժ էր ոչ միայն հայկաբանության, այլև բնական գիտությունների ու փիլիսոփայության բնագավառում:

Վանանդեցիները 1695 թ. լույս են ընծայում աշխարհի առաջին հայերեն տպագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյցը» (կիսագնդեր): Դա մի մեծագիր (150×118 սմ), պղնձափորագիր հրատարակություն է, կատարված բարձր ճաշակով: Նույն թվականին վանանդեցիներն առաջին անգամ տպագրում են նաև Մովսես Խորենացու հուշակավոր «Հայոց պատմությունը»: Այնուհետև, հոգևոր գրքերի հետ տպարանը հրատարակում է այնպիսի աշխարհիկ գրքեր, ինչպես Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» գիրքը, նախատեսված վաճառականների համար, Ղուկաս և Մատթեոս Վանանդեցիների համատեղ հեղինակած «Դուռն իմաստութեանը» (հայերենի քերականության դասագիրք), «Բնաբանութիւն իմաստասիրականը»

⁶ Հայ գրքերը, սովորաբար, ծովային ճանապարհով բերվում էին մինչև Ջմյուռնիա, իսկ այստեղից տարբեր փոխադրամիջոցներով հասցվում Հայաստանի գավառները:

(օգերևութաբանությունը և բնության այլ երևույթներին նվիրված աշխատություն) և այլն:

Հոլանդական վավերագրի ղկայում են, որ Թովմաս Վանանդեցին 1705 թ. ջանքեր է թափել իր տպարանը հայրենիք տեղափոխելու, բայց հաջողության չի հասել: Թովմասը մահացել է 1711 թ., որից հետո տպարանը աշխատել է ևս վեց տարի:



Հայ տպագրության մեկնեա ազուկեցի խոջա Նահապետը

Վանանդեցիները Ամստերդամում կապեր են հաստատում ժամանակի մի քանի նշանավոր մարդկանց, այդ թվում հռչակավոր գերմանացի իրիխտովա Գոտֆրիդ Լայբնիցի հետ: Ղուկաս Վանանդեցու մոտ հայրեն է սովորում գերմանացի արևելագետ Յոհան Յոախիմ Շրյոդերը, որը Ամստերդամում 1711 թ. հրատարակում է իր «Արամեան լիզուին գանձ» հայագիտական աշխատությունը, ուր պրաբարի հետ տրված է նաև աշխարհաբարի (արևելահայ) քերականությունը: Իր աշխատությունը գրելիս Շրյոդերը մեծապես օգտվել է

Վանանդեցիների ծառայություններից, իսկ գրքի հայերեն հատվածների սուպագրության համար օգտագործել է նրանց տպատառերը:

1717 թ. պարտքահերերը բռնագրավում են Վանանդեցիների տպարանը և հայ մշակույթի ամստերդամյան այս կենտրոնը դադարում է գոյություն ունենալուց: Դրանով եվրոպական երկրներում երկար ժամանակով ընդհատվում է հայկական ինքնուրույն գրահրատարակչությունը, մինչև որ 1776 թ. Տրիեստում և 1789 թ. Վենետիկում (Ս. Ղազարում) բացվում են Մխիթարյան տպարանները (ընդ որում, Ս. Ղազարի տպարանի համար Ամստերդամում գնվում են Վանանդեցիներից ժամանակին բռնագրաված տպատառերը):

Հայկական տպագրությունն իր հետագա կյանքը պահելու և նոր դարպացում ապրելու համար պետք ուներ հայկական հոծ միջավայրի. անհրաժեշտ էր, որ տպագիր գիրքը գնորդ ունենար հենց տպարանի մոտ: Մյուս կողմից Հայաստանում տպարան հիմնելու ժամանակը դեռևս չէր հասունացել:

Այս հիմնական պատճառներն էին, որ XVII դարի վերջից հայկական տպագրությունը վարդացումը եվրոպայից արագ թափով տեղաշարժվում է դեպի Կ. Պոլիս, իսկ XVIII դարում այս քաղաքը դառնում է հայ տպագրության դրլխավոր կենտրոնը. այստեղ լույս են տեսնում մոտ 300 անուն հայերեն գրքեր: Ոչ մի քաղաքում մինչև 1800 թ. այսպիսի քանակով հայերեն գրքեր չէին տպագրվել. (Վենետիկը երկրորդ տեղում է, մինչև 1800 թ. այնտեղ տպագրված շուրջ 250 անուն հայերեն գրքերով):

Կ. Պոլսում Աբգար Թոխաթցու տպարանի փակվելուց հետո (1569) ավելի քան հարյուր տարի հայերեն գրքեր չեն տպագրվում: 1677 թ. այստեղ տուրքան է հիմնում նշանավոր գիտնական և հասարակական գործիչ Նրեմիա Չելսպի Քյոմուրճյանը: Նրա տպարանը 1677—1678 թթ. լույս է ընծայում երկու անուն գիրք, որոնցից մեկը՝ «Տեղեաց տնօրինականացը» (աստվածաշնչային վայրերի նկարագրությունը), իր՝ Քյոմուրճյանի հեղինակածն էր:

Դարավերջին Կ. Պոլսում տպագրական գործունեություն է սկսում Բաղեշի Ամրդուլու վանքի նախկին դպիր, ծաղկող (նկարիչ) Գրիգոր Մարզվանեցին: Նա սովորում է գրաձուլական գործը, պատրաստում է տպատառեր, պատկերների ու վարդերի տպատախտակներ և շուրջ չորս տարվա աշխատանքից հետո 1698 թ. լույս է ընծայում «Տաղարան»: Սրանով սկիզբ է դրվում Կ. Պոլսի հայկական տպագրության մի մեծ ու բեղմնավոր ժամանակաշրջանի, որն ընդգրկում է ամբողջ XVIII դարը և հաջորդ դարի առաջին կեսը:

Մարզվանեցու թողած հիշատակարաններից պարզ է դառնում, որ նա հայ գրքի նշանակությունը խորապես գիտակցող անձնավորություն է եղել: Լինելով տաղանդավոր նկարիչ, Մարզվանեցին պատրաստում է տպագրական բազմաթիվ վարդեր, ինչպես նաև ստեղծագործում շատ դիմանկարներ ու խմբանկարներ՝ իր կողմից հրատարակվող գրքերի բովանդակության համեմատ: Դրանով նաև նոր շրջան է բացում հայկական գրքային գծանկարչության բնագավառում:

Մարզվանեցու տպագրական գործունեությունը որոշ ընդմիջումներով տևում է 40 տարի (մինչև 1734 թ.), նա հրատարակում է մեկ ու կես տասնյակ անուն գիրք՝ առաջին անգամ լույս ընծայելով հայ հին մատենագիրներից Արթուրյանի «Պատմությունը» (1709), Զենուր Գլակին վերագրվող «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ» երկը, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցման-

յքը» (անավարտ տպագրութիւն)։ Տպագրական արվեստի լավագույն նմուշ էր մեծածախալ «Յայսմաուրբի» առաջին հրատարակութիւնը (1707)։

Մարդկանցու տպարանի աշխատակից Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցին, դուրս գալով այդ տպարանից, հիմնում է իր սեփականը և 1699 թ. լույս ընծայում մի Շարականցու Դրանով սկսվում է պոլսահայ տպագրութեան մյուս խոշոր ներկայացուցչի շատ բեղմնավոր գործունեութիւնը, որը տևում է մոտ 50 տարի։

Աստվածատուրը հրատարակում է ավելի քան ութ տասնյակ անուն գրքեր՝ ամենից ավելի հայկական եկեղեցու պետքերի համար։ Նա առաջին անգամ հրատարակում է Գրիգոր Նարեկացու «Մատենանոց բնագրութեանը» (1701—1702) ամբողջութեամբ, ապա՝ Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք պարապմանց» (1717), Սիմեոն Զուղայեցու «Գիրք Տրամաբանութեանը» (1728), Հաննա Հովհաննեսի «Պատմութիւն Երուսաղեմին» (1730), Դավիթ Անհաղթի «Գիրք իսկանդար» (1731) և այլն։

Աստվածատուր Դպրի տպարանում աշխատել և այնտեղ իր որոշ երկերը լույս է ընծայել նշանավոր բանաստեղծ Պաղտատար Դպիրը։

XVIII դարի ընթացքում Կոստանդնուպոլսում գործած մյուս հայկական տպարաններից կարելի է հիշել հետևյալները՝ Սարգիս Դպրի և նրա որդի Մարտիրոսի ու թոռների, Ջնշին Հովհաննեսի, Սեբաստացիների, Աբրահամ Խրակացու, Ստեփանոս Պետրոսյանի, Արապյանների «Մայր գոյրատան», Մատթևոս Դպրի և այլն։

Հատկապես նշանակալից եղավ Արապյանների դերը։ Սրանց տպարանում լույս են տեսել շուրջ 150 անուն հայերեն գրքեր ու պարբերականներ, բարձրորակ տպագրութեամբ։ Այս գերդաստանի նշանավոր դեմքը Պողոս Արապյանն էր (1742—1835), որ Օսմանյան կայսրութեան մեջ հռչակված գրաձույլ էր և տպագրիչ։ Նա 70 տարի բեղմնավոր աշխատել է տպագրութեան բնագավառում, եղել է Թուրքիայի արքունի տպարանապետը, պատրաստել է հայկական տարբեր տեսակի շատ տպատառեր, հորինել է թուրքերեն տպագրութեան համար նոր տառատեսակներ, ձուլել է վրացական տառեր։

Ամբողջ XVIII դարի ընթացքում Կոստանդնուպոլսում գործել են շուրջ երկու տասնյակ հայկական տպարաններ, որոնք մեսրոպատառ գիրք են մատակարարել ինչպես տեղի հայութեանը, այնպես էլ Հայաստանին ու հայաշատ այլ շրջաններին։

Թուրքիայում, բացի Կոստանդնուպոլսից, XVIII դարում տպագրութիւն է եղել նաև Զմյուռնիայում։ Այս քաղաքում Մահտեսի Մարկոս անունով տպագրիչը 1759—1762 թթ. ընթացքում իր տպարանում լույս է ընծայել երեք գիրք, որոնցից շատ կարևոր էր Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» (Գիրք ընդդիմութեանց) հրատարակութիւնը՝ միակ պահպանված ձեռագրից։

XVII և XVIII դարերում հայերեն գրքեր տպագրել են նաև մի շարք եվրոպացի գրահրատարակիչներ։ Վերջիններիս տպարաններում հայերեն գրքերի հրատարակութեանը, սովորաբար, մասնակցում էին հայազգի սրբագրիչներ ու բնագիր պատրաստողներ։

Եվրոպական գրահրատարակչութիւններից հայերեն գրքերի լույս ընծայմամբ ամենից ավելի երկար է դառնում Հավատի Տարածման ժուղովի տպարանը (Հոռոմ), որը հիմնադրվել է 1623 թ. Ուրբանոս VIII պապի կողմից և դադարել է գործելուց 1890-ական թվականներին։ Այդ տպարանի նպատակն էր

հրատարակել հռոմեական դավանանքի տարածմանը որևէ ձևով նպաստող դրականություն: Մինչև 1800 թ. այստեղ տպագրվել են մոտ 50 անուն դավանաբանական, լեզվաբանական, փիլիսոփայական հայերեն գրքեր, նաև՝ բառարաններ, հայոց լեզվի այբբենարաններ և այլն:

Վենետիկում տեղի իտալացի հրատարակիչ-տպագրիչներից հայերեն զրքերի լույս ընծայման գործին ամենից ավելի մեծ նպաստ է բերել Անտոնիո Բորտոլին, որի տպարանը մեծարպատառ գրքեր է հրատարակել 1695-ից սկսած մինչև XVIII դարի վերջերը: Ի թիվս բազմաթիվ հայերեն գրքերի, այստեղ են լույս ընծայվել Մխիթար Սեբաստացու հայտնի «Բառգիրք հայկազնան լեզուին» երկու հատորով (1749, 1769), Աստվածաշնչի Մխիթար Սեբաստացու հրատարակությունը (1733) և այլն: Վենետիկի Մխիթարյանները հիմնականում Բորտոլիի մոտ էին տպագրում իրենց երկերը, նախքան Ս. Ղազարում տպարան հիմնելը: Մինչև XIX դարը եվրոպացիների կողմից հայերեն (կամ հայատառ հատվածներով) գրքեր տպագրվել են նաև Լոնդոնում, Փարիզում, Պադուայում, Պարմայում, Հարլեմում, Լայպցիգում, Նյուրնբերգում և այլ բազմաքանակում:

XVIII դարի երկրորդ կեսից հայերեն գրքերի հրատարակման ասպարեզում նկատելի դարձավ Մխիթարյանների գերը: Դեռևս 1716 թ., երբ այդ միաբանությունը հաստատվեց Վենետիկում, գրական-մշակութային աշխույժ գործունեություն սկսեց: Սակայն, շունենալով սեփական տպարան՝ Մխիթարյաններն իրենց դործերը տպագրում էին իտալացիների մոտ: Առաջինը տպարան են հիմնում Տրիեստի Մխիթարյանները՝ այս քաղաքում հաստատվելուց երկու տարի անց՝ 1775-ին և մինչև Վիեննա տեղափոխվելը (1811) լույս են ընծայում ավելի քան 70 անուն հայատառ գրքեր (որոնցից 25-ը հայատառ թուրքերեն): Տրիեստում տպագրված գրքերի մեջ կան այբբենարաններ, բարոյագիտական, պատմական-գեղարվեստական երկեր, Ժամագիրք, Սաղմոսարան և այլն:

Ուշագրավ են հայատառ թուրքերեն հրատարակությունները, նախատեսված թրքախոս հայերի համար, որն, ըստ երևույթին, մի նպաստ էր հայա-ուհայանման գործին: Նման նպաստ էր նաև «Հայնակ և նէմէցնակ այբուբենի թուղթը», որը ձեռնարկ էր Տրանսիլվանիայի օստրախոս հայ երևաանների ազգային լեզու սովորեցնելու համար:

Ս. Ղազարում տպարանի կազմակերպումն սկսվում է 1788 թ.: Հաջորդ տարին այնտեղ տպագրվում են մի քանի գրքեր, այդ թվում Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեանը»: Մինչև դարավերջ Ս. Ղազարի տպարանը լույս է ընծայում մոտ երեք տասնյակ անուն գիրք: Այստեղ են առաջին անգամ հրատարակվում Մխիթար Գոշի առակները (1790), Ղազար Փարպեցու «Պատմութիւն հայոցը» (1793), Մովսես Խորենացու «Գիրք պիտոյիցը» (1796): Մինչև դարավերջ տպարանի լույս ընծայած գրքերից են ամեն տարի տպագրված օրացույցները, Ղուկաս Ինճիճյանի «Տեսութիւն հին և նոր աշխարհագրութեան», Սահակ Պրոնյանի «Երկրաչափութիւն» աշխատությունները և այլն:

Ս. Ղազարի տպարանը անընդհատ կատարելագործվում էր, հարստանում եվրոպական նորագույն սարքավորումներով, այն մշակութային ավելի ու ավելի նշանակալից գեր էր կատարում հայ կյանքում: Վենետիկի, ինչպես նաև Վիեննայի Մխիթարյանների հրատարակչական գործունեությունը զարգացման

րարձրակեցին հասավ հաջորդ՝ XIX դարի ընթացքում, մեծ դեր կատարելով հայ ժողովրդի մշակութային կյանքում:

XVIII դարի 70—80-ական թվականներին հայկական տպագրությունը շարժվելով դեպի արևելք, թափանցեց Հնդկաստան, Ռուսաստան և մանավանդ հայոց բնաշխարհ:

Հնդկաստանում հայկական առաջին տպարանը հիմնում են նշանավոր Շահամիրյանները 1772 թ. Մադրասում: Այս տպարանում են լույս տեսնում հայ աղատադրական մտքի զարգացման մեջ նշանակալից դեր կատարած այնպիսի երկեր, ինչպես «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և «Որոգայթ փառաց» նշանավոր գրքերը: Ըստ երևույթին ավելի նշանակալից էր միևնույն Մազրուս բազաքում քիչ ավելի ուշ Հարություն Շմավոնյանի կողմից հիմնված մյուս հայկական տպարանի դերը, որտեղ 1794 թ. հոկտեմբերից մինչև 1796-ի սկզբները տպագրվեց «Ազդարարը»՝ առաջին հայերեն պարբերականը: Հիմնականում գրաբար լույս տեսնող այս հանդեսում տպագրվում էին նաև աշխարհաբար հոգվածներ: «Ազդարարը» արձագանքում էր ոչ միայն հնդկահայ գաղութի կյանքում կատարված դեպքերին, այլ նաև անդրադառնում էր համահայկական նշանակություն ունեցող հարցերի, տպագրում բանասիրական նյութեր և այլն: Զ. Շմավոնյանը, նախքան «Ազդարարի» լույս ընծայումը, հրատարակել էր ուշագրություն արժանի այնպիսի գրքեր, ինչպես՝ Պորփյուրի «Ներածութիւնը», Պաղտասար Դպրի «Քերականութիւնը», Հակոբ Թաղյանի «Երկրաչափականը» և այլն:

Մադրասից բացի Հնդկաստանում XVIII դարի վերջերին հայկական դրահրատարակչությունը թափանցում է նաև Կալկաթա, որտեղ առաջին հայերեն գիրքը (Աբրահամ Կրետացու «Պատմութիւն անցիցը») հրատարակվում է 1796 թ. Հովսեփ Ստեփանոսյանի հիմնած տպարանում: Հնդկահայ դրահրատարակչությունն ունեցավ իր ուրույն դեմքը և ծաղկման հասավ հաջորդ դարի 40-ական թվականներին:

1781 թ. Ռուսական կայսրության մեջ սկսեց գործել հայկական առաջին տպարանը: Զուղայեցի կրթյալ վաճառական Գրիգոր Խալդարյանցը Լոնդոնում պատրաստել տված իր հայերեն տպատառերը բերում է Պետերբուրգ, գնում տպագրական անհրաժեշտ սարքեր և սկսում մի այբբենարանի («Տետրակ այբբենական») տպագրությունը: Այս ձեռնարկությունը հովանավորում է Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղուիցյանը: Պետերբուրգում Խալդարյանցի տպարանը լույս է ընծայում հիշյալ այբբենարանը (1781), որը Ռուսաստանում տպագրված հայերեն առաջին գիրքն է, Կլեոպատրա Սաֆարյանի «Բանալի գիտութեանը», Խալդարյանցի կաշմած «Շաւիղ լեզուագիտութեան» անունով հայ-ռուսերեն բառարանը, Ներսես Շնորհալու «Ընդհանրականը» (երեքն էլ 1788 թ.) և այլն:

Գ. Խալդարյանցի մահից հետո տպարանը գնում է Զ. Արղուիցյանցը, տեղափոխում նախ Նոր Նախիջևան, ապա՝ Աստրախան: Այս երեք քաղաքներում մինչև դարավերջ տպագրվում են շուրջ 50 անուն հայերեն գրքեր, այդ թվում՝ հայ պատմիչների ու բանաստեղծների երկեր, բառարաններ, օրացույցներ, դասագրքեր, եկեղեցական տարբեր գրքեր և այլն:

Հայկական տպագրությունն իր սկզբնավորումից սկսած երկար ժամանակ զարգացավ օտարություն մեջ: Այդ ընթացքում եղան մտադրություններ, նաև փորձեր տպագրությունը հայոց բնաշխարհում հաստատելու ուղղությամբ,

աշխատանքին: Հայրենիքում տպարան հիմնելու միտքը նրա մեջ հաստատվել էր չեղուն այն ժամանակ, գյուցե և ավելի վաղ, երբ նվիրակ էր Մադրասում ու տեղի հարուստ վաճառական Գրիգոր Միքայելյան-Չակիկյանից խոստում էր ստացել հայրենիքում կառուցվելիք մի տպարանի ծախսերը հոգալու:

Կաթողիկոս դառնալուց երկու տարի անց Սիմեոնը նամակներ է գրում կոստանդնուպոլիս և Զմյուռնիա իր ներկայացուցիչներին՝ հորդորելով նրանց ձեռք բերել հայկական տպատառեր և մամուլ՝ էջմիածին տեղափոխելու համար, բայց հաջողության չի հասնում:

Ի վերջո, նա որոշում է տպարան հիմնել տեղի ուժերով: Դրամական մեծ օգնություն է ստանում Գ. Միքայելյան-Չակիկյանից: Էջմիածնում սկսվում են տպարանի շենքի կառուցման, սուղագրական պարագանների պատրաստման աշխատանքները: Սահղծվում է գրաձուլարան: Աշխատանքներին եռանդուն մասնակցում են կաթողիկոսի տեղապահ Մկրտիչ արքեպիսկոպոս Շոռոժեցին և էջմիածնեցի ոսկերիչ Հարությունը, որը պատրաստում է դարգերի ու պատկերների սուլատախտակներ: Տպագրական ձեռքի մամուլը նույնպես պատրաստվում է այս անձանց ջանքերով:

1771 թ. էջմիածնի տպարանն սկսում է գործել: Աշխատողները՝ գրաշարներ, տպագրողներ, սրբագրիչներ, էջմիածնի միաբանության անգամներն էին: Նորաստեղծ տպարանը կոչվում է Գրիգոր Լուսավորչի անվամբ: Այստեղ ևս ամենից առաջ սկսում են տպագրել մի Սաղմոսարան, որը, սակայն, անհաջող է ստացվում և ոչնչացվում է: Հաջորդ՝ 1772 թ., սկսվում է Սիմեոն Երևանցու «Զբոսարան հոգևոր» աղոթագրքի տպագրությունը, որն ավարտվում է հաջողությամբ:

Այսպես, Սիմեոն Երևանցուն հաջողվում է անել այն, ինչ դեռևս XVI դարից հղել էր հայ շատ գործիչների երազանքը՝ հայրենիքում տպագրել հայերեն գրքեր: Եվ հայկական տպագրությունն իր սկզբնավորման օրից սկսած մոտ 260 տարի հայրենիքից դուրս պանդուխտ մնալուց հետո, վերջապես ուր է դնում հարազատ հողին:

Հայաստանում տպագրված առաջին գիրքը՝ «Զբոսարան հոգևոր»-ը փոքր չափսի է (7,5×10,5 180 էջ), պարզունակ, բայց դյուրընթեռնելի շարվածքով, կաշեպատ կաղմը ղեղեցիկ զարդերով հաճելի տեսք է տալիս գրքույկին: Այն սկսվում է հեղինակի առաջաբանով, իսկ վերջում կա ընդարձակ հիշատակարան, որի մեջ պատմվում է տպարանի հիմնադրման հանգամանքների մասին: Նկարագրվում է Երևանի խանության և վրաց Հերակլ Թագավորի միջև 1768—1771 թթ. տեղի ունեցած արյունոտ պատերազմը, որը մեծ վնաս է տվել հայ բնակչությանը: Պատերազմի պատճառով տպարանի բացումը մի քանի տարով ուշացել է:

1773 թ. էջմիածնի տպարանում լույս է տեսնում Սիմեոն Երևանցու «Տաղարանը», հեղինակի մի շարք բանաստեղծություններով: Հաջորդ տարին տպագրության է հանձնվում և 1775-ին լույս ընծայվում կաթողիկոսի կաղմած «Տոնացույցը», որ 564 էջանոց գիրք է և արդեն աչքի է ընկնում հաջող տպագրությամբ, ունի բազմաթիվ ղեղեցիկ զարդեր ու պատկերներ, որոնք Հարություն էջմիածնեցու հեղինակածն էին: Վերջինս, կատարելագործվելով գրա-

⁷ 1910 թ. այդ տպագրական մամուլը գտնվեց և այժմ պահվում է Հայաստանի պատմության թանգարանում:

հրատարակչական աշխատանքում, շուրջ քսան տարի ամենադյուրծուն մասնակցությունն է ցուցաբերում էջմիածնի տպարանի աշխատանքին, առաջնակարգ արվեստով ձևավորում մի շարք հրատարակություններ:

Տպարանի կատարելագործմանը նպաստ է բերում նաև նշանավոր Պողոս Արապյանը, որը Կ. Պոլսից գալով Կովկաս, կանգ է առնում էջմիածնում (լինում է նաև Թիֆլիսում, ուր 1782—1783 թթ. Հերակլ թագավորի պատվերով սարքավորում է արքունի տպարանը և վրացերեն երկու գիրք տպագրում):

էջմիածնի տպարանի աշխատանքներին խանգարում էր թղթի պակասը: Թուղթը բերվում էր Եվրոպայից, որը մեծ դժվարությունների ու ծախսերի հետ էր կապված: Սիմեոն Երեանցին որոշում է տեղում կառուցել նաև թղթի գործարան: Նա Կոստանդնուպոլսից հրավիրում է երկու օտարազգի մասնագետ: Գործարանի կառուցման գրամը տրամադրում է նույն հնդկահայ Գ. Միքայելյան-Չակիկյանը: 1776-ին Հայաստանի առաջին թղթի գործարանն արդեն աշխատում էր (բամբակի հումքով): Էջմիածնի թուղթը, որ բավական որակով է, 1779 թ. սկսում է օգտագործվել Սիմեոն Երեանցու «Պարտավճար» դավանաբանական երկի տպագրության համար:

Ղուկաս Կարնեցու գահակալության (1780) սկզբի տարիներին տպարանի աշխատանքը, չնայած մի փոքր թուլանում է, բայց արդեն 1785-ին լույս ընծայված Ժամագիրքը վկայում է, որ էջմիածնում տպագրական արվեստը լուրջ առաջընթաց է կատարել: Նույն որակի հրատարակություն է նաև Հովսեփոս Փլաբիրոսի 1787 թ. տպագրված «Յաղագս պատերազմի հրէից» գիրքը՝ Ստեփանոս Լեհացու թարգմանությամբ: 1787—1789 թթ. Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանը լույս է ընծայում նաև Սաղմոսարան, Խորհրդատետր, Շարականոց, իսկ 1793-ին՝ երրորդ անգամ Սիմեոն Երեանցու «Տաղարանը», որից հետո քաղաքական խառնակ պայմանների հետևանքով Հայաստանի միակ տպարանի աշխատանքը կանգ է առնում քառորդ դարով և վերսկսվում 1818 թ.՝ Եփրեմ կաթողիկոսի օրոք:

Մինչև XVIII դարի վերջը էջմիածնի տպարանը լույս է ընծայել 12 անուն գիրք: Այս քանակը, հասկանալի է, որ մեծ չէ հայ հնատիպ գրքի ստեղծման ու տարածման առումով: Էջմիածնի տպարանի հիմնադրումից հետո էլ դեռ բավական ժամանակ հայերեն գրքերի հրատարակության գլխավոր կենտրոնները մնում էին Հայաստանից դուրս: Մայր աթոռը դեռևս անհրաժեշտ զորքերը շարունակում էր պատվիրել դրսում, գլխավորապես Կ. Պոլսի և Ն. Նախիջևանի (այսպես կոչված Նախիջևանի) տպարաններում: Եվ, այնուամենայնիվ, մինչև XVIII դարավերջ էջմիածնում տպագրված այդ մի քանի անուն գրքերը արդեն հայաստանյան հրատարակություններ էին: Ինքնըստինքյան նշանակալից է այն փաստը, որ ավատական ծայր հետամնացության մեջ, պետականությունից վաղուց զրկված, հակառակորդ բանակների բախման թատերաբեմ հանդիսացող Հայաստանը դարձել էր գրահրատարակչության երկիր:

1512 թ. մինչև 1800 թ. հայ տպագրիչների ջանքերով տարբեր երկրներում լույս ընծայվեց մոտ 1000 անուն մեսրոպատառ գիրք: Դա փոքր քանակ չէ, եթե նկատի ունենանք, որ մինչև այդ թվականը շատ ու շատ լեզուներով ընդհանրապես գրքեր լույս չտեսան, իսկ հնատիպ գիրք ունեցող մի շարք փոքր ազգեր մինչև XVIII դարի վերջը կարողացան իրենց ազգային լեզվով հրատարակել մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր գիրք: Խորհրդային Միու-

թյան ժողովուրդները հնատիպ զրականության մեջ հայերեն հնատիպերը բանակով երկրորդ տեղում են (ուսաներեններից հետո):



Նոհ Նախիջևանցի հայ կին (XVIII դ.)

Թվանդակությամբ այդ հազար անուն գրքերը շատ բազմազան են: Գերակշռում են կրոնական-եկեղեցական հրատարակությունները, բայց և զգալի քանակ է կազմում գիտական և ուսումնական (գլխավորապես լեզվաբանական, փիլիսոփայական, բնագիտական, բժշկական, աշխարհագրական) գրականությունը: Հայ պատմիչների երկերի հրատարակությունները, ինչպես և գեղարվեստական գրականությունը նույնպես նշանակալից տեղ ունեն հայերեն հնատիպ գրականության մեջ: Մոտ 300 տարվա ընթացքում ստեղծված հայերեն հնատիպ գրականությունը, հայ մշակույթի շատ հարուստ, բովանդակալից հստակաժն է:

*
* *

Այսպիսով, XIV—XVIII դարերի հայ մշակույթը իր զարգացման ողջ ընթացքով, զգալի կորուստներով և նվաճումներով հանդիսացավ տվյալ ժամանակաշրջանի հայ հասարակության՝ նրա անցած դժվարին ուղու, ծանր վիճակի, բայց և միաժամանակ անսպառ կենսունակության հարազատ արտացոլքը: Լուսավոր ապագայի հանդեպ իր հավատը չկորցնող ժողովրդի կյանքը գունեղ արտահայտություն գտավ գեղարվեստական գրականության բազմապիսի ստեղծագործություններում, անկման ժամանակահատվածը վերապրելով իր առաջնակարգ դիրքերը վերականգնեց պատմագրությունը, միջնադար-

յան դիտական ավանդույթները, վերականգնացրից և նոր ժամանակները զաղափարներն արտահայտելու առաջին փորձերը կատարեց հայ փիլիսոփայական միսլթը, նոր պահանջներին համապատասխան միջնադարյան շրջանակներից դուրս եկավ կերպարվեստը, ծնունդ առավ և տարածվեց լուսավորության հուսալի նեցուկ՝ հայ տպագրությունը: Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, հայ ժողովրդի հոգևոր կյանքում առաջնակարգ դիր խաղացին աշխարհով մեկ սփռված գաղթավայրերը, ուր բազմաթիվ սերունդների ջանքերով ստեղծված մշակութային արժեքները ձեռք բերեցին համազգային նշանակություն և հնարավոր դարձրին օտար նվաճողների կրեկի տակ հեծող մայր հայրենիքի հոգևոր-մշակութային դանդաղ, բայց հարաճուն վերելքը:

Չնայած այն մեծ կորուստներին, որ հայ ժողովուրդն ունեցավ աշխարհավեր պատերազմների թատերաբեմ դարձած իր հայրենիքում, նա XIX դարի շեմին մոտեցավ իր բազմադարյան հոգևոր ավանդույթները վերականգնե՞լ ու հարստացրած, նոր ժամանակներին հանձնելով հսկայական մշակութային ժառանգություն: Եվ երբ շուտով պարսկական լծից ազատագրվեց Հայաստանի արևելյան հատվածը, այդ ժառանգությունը ստեղծագործորեն օգտագործվեց հայ նոր մտավորականության կողմից՝ իր բնույթով նոր, եվրոպական ու ռուսական գիտության, գրականության ու արվեստին համաբայլ ընթացող հայ ազգային մշակույթի ստեղծման գործում: